

ԱՅՑ

## ՎՐԱՍՏԱՆԸ՝ ՈՐՊԵՍ ԳՈՐԾԸՆԿԵՐ ԵՐԿԻՐ ՄԱՍՆԱԿՅԵՑ ԻՍՊԱՆԻԱՅՈՒՄ ԱՆՅԿԱՅՎՈՂ FITUR-2021 ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍԻՆ ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻՆ ՄԱԴՐԻԴՈՒՄ

Մայիսի 19-20-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, երկօրյա այցով, գտնվում էր Իսպանիայի Թագավորությունում:

Այցի շրջանակներում, Վրաստանի կառավարության ղեկավարը հանդիպումներ ունեցավ Իսպանիայի թագավոր Ֆիլիպ VI-ի, վարչապետ Պեդրո Սանչեսի, Իսպանիայի կոնգրեսի նախագահ Մարիչել Բատետի հետ: Վրաստանի վարչապետը, որպես գործընկեր երկրի ղեկավար, Իսպանիայի թագավորի հետ միասին, մասնակցեց FITUR-2021 միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսի բացմանը:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)



ՄԱՅԻՍԻ 26-Ը ՎՐԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՍՏՈՒԹՅԱՆ ՕՐՆ Է

Մայիսի 26-ը՝ Վրաստանի Անկաստության օրը: 1918 թվականի մայիսի 26-ին, Թբիլիսիում Վրաստանի Ազգային խորհուրդը հռչակեց երկրի անկախությունը, ընդունվեց «Վրաստանի անկախության հռչակագիրը»:

Հռչակագրով Վրաստանի ժողովրդին վերապահվում են ինքնիշխան իրավունքներ, իսկ Վրաստանը դառնում է լիարժեք ժողովրդավարական Հանրապետություն: Վրաստանը վերապահվում է միջազգային պատերազմների ժամանակ չեզոքություն պահպանող երկրի իրավունքը և իր սահմանների շրջանակներում հավասարապես ապահովում է բոլորի քաղաքացիական և քաղաքական իրավունքները՝ անկախ ազգային, կրոնական պատկանելության, սոցիալական վիճակի և սեռի: Վրաստանի ժողովրդավարական Հանրապետությունը պարտավորվում է բոլոր պայմանները ստեղծել իր տարածքում բնակվող ազգերի ազատ զարգացման համար:

Իսկ 1919 թվականի մարտի 21-ին, դրանից մեկ շաբաթ առաջ ընտրված Հիմնադիր ժողովը հաստատեց անկախ պետության առաջին կառավարությունը՝ վարչապետ Նոն ժողդանիայի ղեկավարությամբ:

Վրաստանի ժողովրդավարական Հանրապետությունը գոյություն ունեցավ երեք տարի, մինչև 1921 թվականի փետրվարի 25-ը, երբ 11-րդ Կարմիր բանակը գրավեց Թբիլիսին:



COVID - 19

## ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԲԱՐԵԼԱՎԿԵԼ Է, ՆԵՐԴՐՎԱԾ ՍԱՀՄԱՆԱՓՈՎՈՒՄՆԵՐԸ ՄԵՂՄԱՅՎՈՒՄ ԵՆ ՏԵՂԱՇԱՐԺԻ ՍԱՀՄԱՆԱՓՈՎՈՒՄԸ ԺԱՍԸ 21:00-Ի ՓՈՒՍԱՐԵՆ, ԺԱՍԸ 23:00-ԻՑ 05:00-Ն Է

Միջգերատեսչական համակարգող խորհրդի որոշմամբ, մայիսի 17-ից մեղմացվել է սահմանափակումը գիշերային ժամերին, պարետային ժամը 21:00-ի փոխարեն, ժամը 23:00-ից ժամը 05:00-ն է:



նաեւ բացօթյա սրճարաններն ու ռեստորանները:

Ըստ միջգերատեսչական համակարգող խորհրդի որոշման, Թբիլիսիի քաղաքապետարանը փոխել է մայրաքաղաքում քաղաքային տրանսպորտի համար սահմանված սահմանափակումները: Մասնավորապես, մայիսի 17-ից քաղաքային տրանսպորտը (ավտոբուսները, Թբիլիսիի մետրոն և միկրոավտոբուսները) ուղեւորներին ժամը 21:00-ի փոխարեն, կսպասարկի մինչև ժամը 23:00-ն: Ինչ վերաբերում է ճոպանուղիներին, Կրիայի լճի և Ռիդե-Նարիդալա ճոպանուղիները բաց կլինեն առավոտյան 10:00-ից 22:00-ն, իսկ Բագբեի-Համալսարան ճոպանուղին բաց կլինի առավոտյան 08:00-ից 20:00-ն:

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)

Մայիսի 17-ին ընդունված որոշման համաձայն, այս շաբաթվանից, հնարավոր կլինի շահագործել

ՄԱՅԻՍԻ 28-Ը ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐՆ Է

Մայիսի 28-ին Հայաստանը նշում է Հայաստանի Առաջին Հանրապետության օրը: Մայիսի 26-ին, Սարդարապատում պարտության մատնելով թուրքական բանակին, հայկական զորքերը կարողացան կասեցնել թուրքական ներխուժումն Անդրկովկաս և փրկել Հայաստանը լիակատար ոչնչացումից:

Հայաստանի Հանրապետությունը հռչակվեց «Հայկական ազգային խորհրդի» կողմից 1918 թվականի մայիսի 28-ին, Թբիլիսիում, Անդրկովկասյան ժողովրդավարական դաշնային հանրապետության փլուզումից հետո: Մայիսի 29-ին Հովհաննես Քաջազունին նշանակվեց անկախ Հայաստանի առաջին վարչապետ, երկրի մայրաքաղաքը դարձավ Երեւանը: Հայաստանի Հանրապետությունը գոյություն ունեցավ ընդամենը երկու տարի, մինչև 1920 թվականի դեկտեմբերի 2-ը, երբ Երեւան մտան 11-րդ Կարմիր բանակի զորամասերը, և հանրապետությունը խորհրդայնացվեց: 1991 թվականից մայիսի 28-ը հռչակվեց որպես Հայաստանի Առաջին Հանրապետության օր:



ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳ

## ՀԱՄԱՎԱՐԱԿՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՂԹԱՀԱՐՈՂ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ

Մայիսի 20-ին, Վրաստանի հանրային դպրոցների 12-րդ դասարանցիների համար, հնչեց Վերջին զանգը: Կորոնավիրուսի համավարակով պայմանավորված սահմանափակումների պատճառով, նախորդ տարիների օրինակով, այս (Շարունակությունը՝ 4-րդ էջում)

## «ՎՐԱՍՏԱՆԸ» 100 ՏԱՐԵԿԱՆ Է



Վրաստանի հայալեզու «Վրաստան» թերթը 100 տարեկան է: Այդ տարիների ընթացքում թերթը հավատարմորեն ծառայել է վրաց և հայ ժողովուրդների բազմադարյա բարեկամությանը: Հայալեզու հասարակությանը ներկայացրել վրաց մշակույթի քաղաքական կյանքի, երկրում ընթացող գործընթացների մասին տեղեկատվությունը:

«Վրաստան» թերթը եւ թերթի գլխավոր խմբագիր, ճանաչված լրագրող Վան Բայբությանը ինչպես Վրաստանում, այնպես էլ՝ Հայաստանում արժանիորեն օգտվում են հեղինակությամբ, նրա (Շարունակությունը՝ 5-րդ էջում)




Հավանաբար, ես այն քչերից մեկն եմ, որ գրեթե ութ տասնամյակ տարիներ հանդիսանում եմ մեր սիրելի պարբերականի բաժանորդն ու հավատարիմ ընթերցողը: Այդ, շուրջ ութ տասնամյակ, քանի որ թերթի, այն ժամանակվա «Սովետական Վրաստան» թերթի հետ կապված եմ դեռեւս դպրոցական տարիներից: Հետո, Ծալկայի շրջանի կոմերիտ, կուսշրջկոմի, շրջգործկոմի համակարգում աշխատելու տարիներին թերթի հետ կապը է՛լ ավելի սերտացավ, դարձավ հարազատ, մերձավոր: (Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

## ՔՆՆԱՐԿՎԵՑ ՓՈՒՆՇԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՅՆՈՂ ՀԱՐՅԵՐԻ ԼԱՅՆ ՇՐՋԱՆԱԿ

Մայիսի 17-ին, Թբիլիսիում, Վրաստանի արտաքին գործերի փոխնախարար Լաշա Դարասելիան հանդիպում ունեցավ աշխատանքային երկօրյա այցով Վրաստանում գտնվող Հայաստանի արտաքին գործերի փոխնախարար Գագիկ Ղալաջյանի հետ:



Հանդիպմանը կողմերը քննարկեցին երկու կողմ հարաբերությունների օրակարգում ընդգրկված եւ փոխադարձ հետաքրքրություններ կայացնող հարցերի լայն շրջանակ, մտքեր փոխանակեցին Վրաստանի եւ Հայաստանի միջեւ քաղաքական, տնտեսական, մշակութային, հումանիտար եւ այլ ոլորտներում համագործակցության, ինչպես նաեւ տարածաշրջանային անվտանգության եւ կայունության հարցերի շուրջ: Նշվեց, որ տարածաշրջանային կայունությունն ու խաղաղությունը մեծ նշանակություն ունեն երկու երկրների համագործակցության զարգացման համար:

ԱՅՑ

# ՎՐԱՍԱՆԸ՝ ՈՐՊԵՍ ԳՈՐԾԵՆԿԵՐ ԵՐԿԻՐ ՄԱՍՆԱԿՅԵՅ ԻՄՊԱՆԻԱՅՈՒՄ ԱՆՅՎԱՅՎՈՂ FITUR-2021 ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ՅՈՒՅՆԱԶԱՆՂԵՍԻՆ

(Սկզբը՝ 1-ին էջում)

Նշենք, որ զբոսաշրջության միջազգային ցուցահանդեսում Վրաստանը հատուկ տարածք ունի, որը միջազգային տուրօպերատորներին, ընկերություններին եւ լրատվամիջոցների ներկայացուցիչներին հնարավորություն է տալիս ավելի շատ տեղեկություններ ստանալ


Վրաստանի զբոսաշրջային ուղղությունների մասին:

Ինչպես նշվեց հանդիպումների ընթացքում, Վրաստանի վարչապետի ներկայիս այցը հիանալի ազդակ է երկկողմ հարաբերությունների խորացման համար: Իսպանական կողմը կրկին հավաստեց իր պատրաստակամությունը՝ աջակցել Վրաստանին տարածքային

ամբողջականության վերականգնման, երկրի եվրամիության եւ Եվրատվանտյան կառույցներին ինտեգրման հարցում: Հանդիպումներում վերահաստատեց հետագայում բոլոր մակարդակներում այս աջակցությունը շարունակելու պատրաստակամությունը:

Մադրիդում կայացած հանդիպումներին մասնակցեցին

Վրաստանի փոխվարչապետ, արտաքին գործերի նախարար Դավիթ Զալկալիանին, Վրաստանի խորհրդարանի ճյուղային էկոնոմիկայի եւ տնտեսական քաղաքականության կոմիտեի նախագահ Դավիթ Սոնոլուաշվիլին եւ Իսպանիայի Թագավորությունում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Իլիա Գիորգաձեն:



## ԱՄՆ-ՌՈՒՍԱՍԱՆՆ ՏԵՎԱԿԱՆ ԸՆԴՄԻՋՈՒՄԻՑ ՀԵՏՈ ԿԱՅՑԱԿ ԱՄՆ ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԵՎ ՌԴ ԱԳ ՆԱԽԱՐԱՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Տեւական ընդմիջումից հետո, մայիսի 20-ին, Ռեյկյավիկում կայացավ ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինկենի եւ Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովի հանդիպումը:

Հանդիպմանը կողմերը քննարկեցին երկրորդ հարաբերությունների եւ միջազգային իրավիճակին առնչվող հարցեր, անդադարձան նաեւ Հայաստանի եւ Ադրբեյջանի միջեւ հակամարտության կարգավորման հարցին:

Հանդիպման ավարտից հետո Բլինկենը հայտարարեց, որ ԱՄՆ-ը փնտրում է «Ավելի կայուն ու կանխատեսելի հարաբերություններ Մոսկվայի հետ»:

Իր հերթին, Լավրովը նշեց, որ «Առկա է անառողջ իրադրությունը հաղթահարելու անհրաժեշտության ըմբռնում, որը Մոսկվայի եւ Վաշինգտոնի հարաբերություններում ստեղծվել է նախորդ տարիներին»:

## ԻՍՐԱՅԵԼ-ՊՈՒՆՅԱՍԻՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀՐԱՂԱՂՐՈՒՄ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԵՆԹԱՅԻ ՆԱԽԱՂԻՅՈՒՄ

Մայիսի 21-ին, տեղական ժամանակով ժամը 02:00-ից (թրիսյան ժամանակով ժամը 03:00-ից) Իսրայելի եւ Գազայի հատվածի պաղեստինյան խմբավորումների միջեւ հաստատվեց իրադարձի ռեժիմ:

Հիշեցնենք, որ Գազայում գործող խմբավորումները եւ իսրայելական բանակը հարվածներ են փոխանակել մայիսի 10-ից: Հրթիռակոծումները հետեւել են Արեւելյան Երուսաղեմում Ալ Աքսա մզկիթի մոտ անկարգություններին, որոնք ծայր են առել Շեյխ Ջարահ թաղամասում արաբ ընտանիքներով բնակեցված տների բռնագրավման մասին իսրայելական դատարանի վճռի պատճառով:

Այդ ժամանակամիջոցում արմատականները հրեական պետության տարածք են արձակել ավելի քան 4 հազար հրթիռ, ի պատասխան իսրայելացի զինվորականները ռմբակոծությունների են ենթարկել միջատարածքի հարյուրավոր թիրախներ: Գազայի հատվածի առողջապահության նախարարության վերջին տվյալներով՝ Գազայում զոհված պաղեստինցիների թիվը հասել է 232-ի, 1 900-ը վիրավորվել են: Ընդամենը պաղեստինյան տարածքներում, հաշվի առնելով Հորդանան գետի արեւմտյան ափը, հակամարտության զոհ է դարձել 260 մարդ: Իսրայելական կողմից զոհվել է առնվազն 12 մարդ:

## ԻՐԱՆ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՄԵՐԺՎԵԼ Է

Իրանը բացառում է Վիեննայում տեղի ունեցող բանակցությունների ընթացքում որեւիցե նախնական համաձայնագրի կնքումն իրանական միջուկային ծրագրի շուրջ Գործողությունների համապարփակ համատեղ պլանի (ԳՀԳՊ) իրականացման վերսկսման վերաբերյալ:

Նշենք, որ ԳՀԳՊ-ն 2015 թվականին Իրանի հետ ստորագրել են ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հինգ մշտական անդամները եւ Գերմանիան՝ Իրանի միջուկային մշակումների շուրջ ճգնաժամի կարգավորման նպատակով: ԱՄՆ նախորդ նախագահ Դոնալդ Թրամփը 2018 թվականին որոշում ընդունեց միջուկային գործարքից դուրս գալու մասին: Ներկայումս Վիեննայում տեղի են ունենում բանակցություններ ԳՀԳՊ-ին ԱՄՆ-ի եւ Իրանի վերադարձման շուրջ:

## ԵՎՐԱՆՏԵԳՐՈՒՄ

### ՎՐԱՍԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՐԻ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՅՑԸ ԲՐՅՈՒՄԵԼ

Մայիսի 16-19-ին, Վրաստանի խորհրդարանի նախագահ Կախա Կուճավան, օրենսդիր մարմնի խոսնակ նշանակվելուց հետո, առաջին եռօրյա պաշտոնական այցով գտնվում էր Բրյուսելում:



Այցի շրջանակներում, Կախա Կուճավան հանդիպումներ ունեցավ Եվրոպական խորհրդարանի նախագահ Դավիդ

Մարիա Սասուլիի, Եվրախորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Դեյվիդ Մակքալիստերի, Եվրամիության, Եվրախորհրդի եւ Եվրախորհրդարանի պաշտոնատար անձանց հետ:

Հանդիպումներին կողմերը քննարկեցին Վրաստանում ընթացող իրադարձությունները, երկրի եվրատվանտյան ինտեգրումը եւ առկա մարտահրավերները: Կախա Կուճավան Եվրամիության կառույցների ղեկավարներին շնորհակալություն հայտնեց 2020 թվականի խորհրդարանական ընտրություններից հետո Վրաստանում ստեղծված իրավիճակի կարգավորման հարցում Եվրամիության գոր-

ծադրած ջանքերի համար: Անդրադարձան 2021 թվականին նշանակված տեղի ինքնակառավարման մարմինների ընտրությունների եւ միջազգային դիտորդների ակտիվ ներգրավվածության կարևորությանը:

Հանդիպումներին առանձնակի խոսվեց Վրաստանի եվրաինտեգրման գործընթացի մասին: Կողմերը կենտրոնացան այն դիմումի վրա, որով Վրաստանը 2024 թվականին պատրաստվում է պաշտոնական հայտ ներկայացնել Եվրամիությանն անդամակցելու համար:

Եվրամիության կառույցների ղեկավարները վերահաստատեցին կայուն աջակցությունը Վրաստանի արեւմտյան ինտեգրմանը:

## ԿԱԽԱ ԿՈՒՃԱՎԱ. «ՄԵՐ ՀԱՎԱԿՆՈՑ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱՎԱՆԱՅՄԱՆ ՀԱՄԱՐ, ԱՆՀՐԱԺԵՑ Է ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ ԼՍԵԼԻ ԴԱՐՁՆԵԼ ԲՈԼՈՐ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԶԱՅՆԸ»

Մեկնաբանելով Բրյուսելում Եվրամիության կառույցների ղեկավարների հետ հանդիպումները, Վրաստանի խորհրդարանի նախագահ Կախա Կուճավան նշեց, որ Եվրոպացիներն առանձնակի նշանակություն են հատկացնում երկրի օրենսդիր մարմնի լիարժեք գործունեությունը, այն համարելով Եվրամիությունում ծանապարհի գլխավոր ազդակներից մեկը:

Կախա Կուճավանի խոսքով, Վրաստանի հավակնոտ ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ է, որպեսզի խորհրդարանը լիարժեք գործի, եւ բոլոր ընտրողների ծայրը լսելի դառնա խորհրդարանում: Նա հույս հայտնեց, որ վրաց ժողովուրդը եւ Վրաստանի գործընկերները կտեսնեն խորհրդարանի 150 զբաղեցրած տեղը:

- Վրաստանին վերաբերող այս հավակնոտ ծրագրերը, որոնք ունենք մենք կյանքի կոչելու համար, անհրաժեշտ է,

որպեսզի խորհրդարանը դառնա լիարժեք աշխատունակ, եւ բոլոր ընտրողների ծայրը լսվի օրենսդիր մարմնում: Իսկ սա նշանակում է՝ բոլոր 150 պատգամավորների մասնակցությունը գործընթացին, ուստի, հուսով եմ, որ կհասնենք դրան, եւ ինչպես վրաց ժողովուրդը, այնպես էլ՝ մեր գործընկերները, ովքեր այդ ակնկալիքն ունեն, վերջապես կտեսնեն Վրաստանի խորհրդարանում համարված բոլոր 150 տեղերը,- հայտարարեց Կախա Կուճավան:

## ՄԻՋԱՂԵՊ

### ԻՆՉՈՒՒ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԴՄԱՆԻՍՈՒՄ ՎԵՐԱԾՎԵՑ ԽՄԲԱՅԻՆ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ

Մայիսի 16-ին, Դնանիսիում, խանութներից մեկի մոտ, տեղի աղբբեռացիների եւ էկոմիգրանտ սվանների միջեւ, կենցաղային հողի վրա տեղի ունեցած առճակատումը վերածվեց խմբային բռնության:

Միջադեպը հատկապես լարվեց հաջորդ օրը, երբ երկրի տարբեր վայրերից դեպքի վայր եկան դիմակայող կողմերի այլ մասնակիցները: Իրավիճակի կայունացման նպատակով այդ օրը Դնանիսի էին ժամանել Վրաստանի ներքին գործերի նախարար Վախթանգ Գոմելաուրիին, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Սոզար Սուբարին, Քվեմո Քարբլիի երկրամասային վարչության եւ Դնանիսիի մունիցիպալիտետի ղեկավարության ներկայացուցիչները: Պաշտոնյաների ակտիվ միջնորդությամբ, Դնանիսիում տեղի ունեցած դիմակայող կողմերի ներկայացուցիչների հանդիպումը, որտեղ ձեռքբերվեց բախման դադարեցման եւ կողմերի հաշտեցման պայմանավորվածություն:

Վրաստանի ներքին գործերի նախարարությունը տարածեց հայտարարություն, որով տեղացիներին կոչ արեց հնազանդել ոստիկանության օրինական պահանջներին եւ պահպանել հանգստություն, որպեսզի կենցաղային հողի վրա բախումը չվերածվի արհեստական էթնիկական առճակատման:

«Ներքին գործերի նախարարությունը,

որպես կարգուկանոնի պահպանման պատասխանատու գերատեսչություն, կոչ է անում Դնանիսիում հավաքված քաղաքացիներին պաշտպանել օրենքի պահանջներն ու պահպանել հանդարտություն: Ոստիկանությունը կգործի իրեն տրված մանդատի շրջանակներում եւ կարծազանքի ցանկացած օրենքի խախտմանը:

Ներքին գործերի նախարարության կողմից իրականացվում են քննչական միջոցառումներ: Դնանիսիում առճակատման կրկնությունը կանխելու եւ իրադարձությունների արհեստական սրացումից խուսափելու նպատակով, ներքին գործերի նախարարության աշխատակիցները կենտրոնացված են տեղում եւ պահպանում են հասարակական կարգը»,- ասված է հայտարարության մեջ:

Դեպքի վայրում գտնվող Վրաստանի ներքին գործերի նախարար Վախթանգ Գոմելաուրին նշեց, որ Դնանիսիում տեղի ունեցած դեպքերի կապակցությամբ, որեւէ անձ չի ձերբակալվել, սակայն հարցաքննությունն ընթանում է:

Անդրադառնալով բուն միջադեպին, նախարարն ասաց, որ ներկայումս մի-



ջադեպն ավարտված է, կողմերը հաշտվել են, սակայն իրավիճակը վերահսկելու համար ոստիկանության ուժերը կմնան տեղում:

- Ինչ վերաբերում է ներքեւում տեղի ունեցած միջադեպին, ապա ինչպես գիտեք, ոստիկանությունը տեղակայված էր 5-6 տեղամասերում: Ցավոք, բախումն ընթացավ ոչ միայն Դնանիսիից, այլ Թբիլիսիից, Ռուսթավիից եւ տարբեր քաղաքներից եկած քաղաքացիների միջեւ:

Իրավիճակը սրվեց եւ տեղում բախումներ եղան, ուր լրագրողներին նույնպես վնաս հասցվեց: Իհարկե, դեպքի առնչությամբ հետաքննություն է սկսվել, մեկ գործ է հարուցվել եւ այս շրջանակներում կքննվի: Ինչ վերաբերում է բուն թեմային, ապա միջադեպն այսօր սպառված է, երկու կողմերն էլ հանդիպել են, հաշտվել, հուսով եմ, որ այլեւս չեն շարունակի,- ասաց Վախթանգ Գոմելաուրին:

ՅՈՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ

Շարաքից շարաք. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ԴՐԱՄԱՇՆՈՐՉԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՄՆ-Ի ՄԻՋԵՎ

Մայիսի 21-ին, Վրաստանի կառավարության գրասենյակում կայացավ «Համուն» Վրաստանի կայուն զարգացման խթանման» դրամաշնորհային համաձայնագրի ստորագրման արարողությունը:



Վրաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ ստորագրվեց դրամաշնորհային համաձայնագիր, համաձայն որի ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը (USAID) Վրաստանին կտրամադրի մինչեւ 67 մլն դոլարի դրամաշնորհ՝ այն 330 մլն դոլարի հասցնելու հնարավորությամբ:

Համաձայնագիրը ստորագրեցին Վրաստանի ֆինանսների նախարար Լաշա Խուցիշվիլին եւ «USAID» առաքելության տնօրեն Փիթեր Վիլերը: Արարողությունը բացեցին Վրաստանի վարչապետ Իրակլի Գաբրիաշվիլին եւ Վրաստանում ԱՄՆ դեսպան Քելլի Դեզմանը:

ԱՉԳԱՅԻՆ ԲԱՆԿԸ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ ԶԳՈՒՇԱՅՆՈՒՄ Ե ՎԱՐԿԵՐԻ ՏՐՄԱՆ ԽԱՐԴԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻՑ

Վրաստանի Ազգային բանկի տվյալներով, վերջին շրջանում գրանցվել են դեպքեր, երբ արտասահմանյան բանկերը եւ կազմակերպությունները ֆինանսական հատվածի շահառուներին որոշակի գումարի դիմաց առաջարկում էին վարկեր:

«Հարկ է նշել, որ ծանուցագրերում նշված կազմակերպությունները Վրաստանի Ազգային բանկի վերահսկողության տակ գտնվող սուբյեկտներ չեն: Հետեւաբար, այս սխեմայով հետաքրքրվող անձանց կողմից տարբեր տեսակի խարդախության կատարման ռիսկ կա:

Հետեւաբար, Վրաստանի Ազգային բանկը մեկ անգամ եւս հորդորում է քաղաքացիներին ուշադիր եւ զգույշ լինել սեփական միջոցները տնօրինելիս, հատկապես, երբ նման առաջարկները գալիս են կասկածելի կամ անորոշ հեղինակություն ունեցող կազմակերպություններից: Ցանկացած առաջարկի դեպքում բաժանորդը պետք է համոզվի, որ առաջարկը օրինական է եւ խարդախության նշաններ չի պարունակում:

Հարցերի դեպքում կարող եք դիմել Վրաստանի Ազգային բանկի թե՛ գիծ՝ 2 406 406 հեռախոսահամարով:

Հիշեցնենք, որ Վրաստանի Ազգային բանկը, ֆինանսական ոլորտում սպառողների իրավունքները պաշտպանելու համար, պարբերաբար տալիս է նախազգուշացումներ, ինչպես նաեւ տեղեկություններ ֆինանսական խարդախությունների վերաբերյալ: Նմանատիպ բովանդակության նյութեր տեղադրվում են Ազգային բանկի պաշտոնական եւ ֆինանսական կրթության կայքերում»,- հայտարարում են Ազգային բանկում:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՄՏՈՐԱԳՐՎԵՑ ԵՌԱԿՈՂՄ ՓՈԽԸՄԲՈՒՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ




Մայիսի 17-18-ին, Վրաստանի փոխվարչապետ, արտաքին գործերի նախարար Դավիթ Ջալկալիանին պաշտոնական այցով գտնվում էր Կիևում:

Այցի շրջանակներում, Վրաստանի արտաքին գերատեսչության ղեկավարը հանդիպում ունեցավ Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Չելենսկու, Արտաքին գործերի նախարար Դմիտրի Կուլեբանի հետ, մասնակցեց «Ասոցիացված եռյակի» ԱԳ նախարարների անդրանիկ հանդիպմանը:

Ուկրաինայի բարձրաստիճան ղեկավարների հետ հանդիպմանը կողմերը քննարկեցին երկկողմ եւ բազմակող հետաքրքրությունները: «Ասոցիացված եռյակի» շրջանակներում՝ Վրաստանի փոխվարչապետ, Արտաքին գործերի նախարար Դավիթ Ջալկալիանին, Ուկրաինայի Արտաքին գործերի նախարար Դմիտրի Կուլեբանի եւ Մոլդովայի Արտաքին գործերի նախարար Աուրելի Զոկոյը Կիևում ստորագրեցին փոխըմբռնման հուշագիր:

Հուշագիրը ենթադրում է ԵՄ-ի հետ ասոցիացված երեք պետությունների արտաքին գերատեսչությունների համակարգված ու համագործակցման ձեռագրի ստեղծում, ինչի նպատակը եվրոպական ինտեգրման հետագա խորացումն է:

«Ասոցիացված եռյակը» միասին կհամագործակցի եվրոպական ինտեգրման համար ընդհանուր հետաքրքրություններ կայացնող հարցերի շուրջ, այդ թվում՝ Ասոցիացման համաձայնագրի իրագործումը եւ «Արեւելյան գործընկերության» հետագա զարգացումը:



ՄԱՅԻՍԻ 17-Ը ԸՆՏԱՆԻՔԻ ՍՐԲՈՒԹՅԱՆ ՕՐ

Մայիսի 17-ին, Թբիլիսիում, Ընտանիքի սրբության օրվա առթիվ, ավտոշարայունով տեղի է ունեցել երթ:

Այս տարի համավարակի պատճառով ոտքով երթ չի անցկացվել:

Երթը սկսվել է Սուրբ Երրորդության տաճարից, որտեղ առավոտյան օծվեց ջուրը, ապա՝ հոգեւորականները շարասյուն շարժվեցին դեպի մայրաքաղաքի թաղամասեր:

Հիշեցնենք, որ մայիսի 17-ը, ընտանիքի ամրության եւ ծնողների հարգանքի օր, Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի նախաձեռնությամբ հաստատվել է 2014 թվականին:

ԻՐԱԿԼԻ ՍԵՍԻԱՇՎԻԼԻՆ՝ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ

Իրակլի Սեսիաշվիլին նշանակվել է Վրաստանի վարչապետի պաշտպանության ու անվտանգության հարցերով խորհրդակամ:



Իրակլի Սեսիաշվիլին Վրաստանի տասներորդ գումարման խորհրդարանի անդամ է, 2012-2020 թվականներին եղել է 8-րդ եւ 9-րդ գումարումների խորհրդարանի պաշտպանության եւ անվտանգության հանձնաժողովի նախագահ: Նա երկար տարիների փորձ ունի ինչպես մասնավոր եւ ոչ կառավարական ոլորտներում, այնպես էլ՝ ակադեմիական ոլորտում: Ավարտել է Թբիլիսիի պետական համալսարանը, Հայդելբերգի եւ Բամբերգի համալսարանները, ունի Համբուրգի համալսարանի, խաղաղության եւ անվտանգության ուսումնասիրությունների ինստիտուտի անվտանգության հետազոտությունների մագիստրոսի կոչում:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՐՈՐԴՆԵՐԻ

ՄՈՊԵԴՆԵՐՈՎ ԵՎ ՍԿՈՒՏԵՐՆԵՐՈՎ ԵՐԹԵՎԵԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՑԱՆԿԱՑՈՂԸ ՊԵՏՔ Ե ՈՒՆԵՆԱ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ, ԻՍԿ ԱՅԴ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԸ՝ ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇ



Սկսած 2005 թվականից մինչ օրս, Վրաստան է ներկրվել ավելի քան 30 հազար մոպեդ, սկուտեր, թե՛ գործող օրենսդրությունը դրանցից ոչ մեկին չի առնչվում: Հատկանշական է, որ ճանապարհային վթարի դեպքում անգամ, մոպեդի վարորդը հավասարեցված է հետիոտնին: Մոպեդների երթուղիները տեսապահակողության ենթակա չէ, այդ իսկ պատճառով ՆԳ նախարարությունը մոնիտորինգ չի կարողանում անցկացնել եւ վիճակագրական տվյալների հավաքագրում ու վերլուծություն էլ չի իրականացնում:

թյան «իրավունքից», առանց վարորդական իրավունքի, հաճախ էլ՝ հակառակ երթուղիներում:

- Ցավոք, դուք իրավացի եք, հիմնախնդիրն իրոք սրվել է, եթե ժամանակին այն կարգավորելու, ապա, նման իրավիճակի չէինք հասնի: Ավանդատ է, որ շատերի համար մոպեդով երթուղիները եկամտի աղբյուր է, թե՛ գտնում են նաեւ, որ նրանց համար կանոնների խստացումն անհրաժեշտություն է: Սկուտերների վարորդները պարտավոր կլինեն ուսումնասիրել ճանապարհային անվտանգության օրենքները: Նշենք, որ համավարակով պայմանավորված սահմանափակումների ժամանակ էլ, այդ սահմանափակումները սկուտերներին չէին վերաբերում, ինչն էլ յուրովի խթանեց սկուտերների ներկրումն ու վաճառքը:

- Ձեր կարծիքով, սկուտերները, արդյոք, պետք է անցնեն պարտադիր տեխստուզում:

- Ներկա դրությամբ, մոտոտրանսպորտի տեխստուզման անհրաժեշտություն չկա, եւ դա առանձին քննարկման հարց է, թե՛ համոզված եմ, որ ժամանակի ընթացքում դա էլ կդառնա անհրաժեշտություն:

- Օրենքի կիրարկման դեպքում, կար-

գի խախտման ժամանակ մոպեդի վարորդներին կգրվի՞ տուգանք:

- Բնականաբար, քանի որ նրանք կուցենան վարորդական վկայական, եւ խախտումների համար պետք է պատասխանեն այնպես, ինչպես մյուս վարորդները: Կանգնեցրեք եւ հարցրեք ցանկացած վարորդին, թե ինչպես են սկուտերներն արգելքներ հարուցում մորմալ երթուղիներում: Հենց դա պետք է վերացվի, սկուտերի վարորդները նույնպես պետք է պատասխան տան ցանկացած խախտման համար:

- Ձեր կարծիքով, խորհրդարանի փոփոխության երրորդ ընթերցումը ե՞րբ կանցկացվի եւ ե՞րբ կգործի օրենքը:

- Ինչպես ասացի, համավարակով պայմանավորված իրավիճակի կապակցությամբ, խորհրդարանում օրենքի փոփոխության երրորդ ընթերցումը հետաձգվեց: Ներկայումս հարցը սրվեց այն աստիճան, որ ՆԳ նախարարությունն էլ շահագրգռված է օրենքի շուտափույթ կիրարկմամբ, հաշվի առնելով նաեւ այն հանգամանքը, որ ՆԳ նախարարությունն ինքն էլ օրենքի նախաձեռնողն է, կարծում եմ, որ մոտ ժամանակներս այն կկիրարկվի:

ԱՐԵՎԻԿԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳ

ՀԱՄԱՎԱՐԱԿՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՂԹԱՀԱՐՈՂ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ

(Սկզբը՝ 1-ին էջում) տարի տոնական հատուկ միջոցառումներ չանցկացվեցին, թեև այս տավա շրջանավարտներն անմասն չմնացին շնորհավորանքներից:

Վերջին զանգի առիթով 12-րդ դասարանցիներին ողջունեց եւ շնորհավորեց Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին:

- Այսօր Վրաստանի դպրոցներում կինչի Վերջին զանգը: Շնորհավորում եմ բոլորին ուսման ավարտի առիթով եւ հաջողություններ եմ մաղթում ձեր կյանքում նոր քայլեր կատարելու հարցում, - հայտարարեց վարչապետը եւ հավելեց, որ պետությունն իր հերթին կանի հնարավորը, որպեսզի երիտասարդներն ունենան խաղաղ ու երջանիկ կյանքի եւ զարգացման բոլոր հնարավորությունները:

Իրակլի Դարիբաշվիլին շնորհակալություն հայտնեց ուսուցիչներին աշխատանքի համար:

«Համոզված եմ, որ ապագայում ձեր ամբողջ էներգիան նվիրելու եք ուսմանն ու զարգացմանը եւ ձեր գիտելիքներով ու արհեստավարժությամբ հավատարմորեն կծառայեք հայրենիքին, կհոգաք մեր երկրի ավելի լավ ապագայի մասին: Պետությունն իր հերթին կանի հնարավորը, ձեզ երաշխավորելու խաղաղ եւ երջանիկ կյանքի ու զարգացման յուրաքանչյուր հնարավորությունը: Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել բոլոր ուսուցիչներին իրենց քրտնաջան աշխատանքի համար: Մեկ անգամ եւս շնորհավորում եմ բոլորին: Մենք հպարտ ենք ձեզ նով եւ մաղթում ենք ապագայում մեծ հաղթանակներ, հաջողություններ եւ առաջընթաց»:



Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին:



Շրջանավարտներին ուղղված իր շնորհավորական խոսքում Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Միխեիլ Չխենկելին նշեց.

- Չեմ կարող չնշել, որ դուք առանձնահատուկ երիտասարդներ եք: Երբ համավարակը կտրուկ փոխեց բոլորիս կյանքը, դուք հաղթահարեցիք անսպասելի դժվարությունները եւ հաջողությամբ ավարտեցիք ձեր ուսումը: Այս հիմնալի փորձը, անկասկած, դրական ազդեցություն կունենան ձեր ապագայի վրա, եւ ես համոզված եմ, որ ձեր կյանքի ուղու յուրաքանչյուր մարտահրավեր կվերածեք հնարավորության:

Եվս մեկ անգամ ուզում եմ ձեզ երջանիկ եւ հետաքրքիր կյանք մաղթել: Հիշե՛ք, որ դուք եք ստեղծում մեր երկրի ապագան: Մենք ունենք ձեր հույսը, - հայտարարեց Միխեիլ Չխենկելին:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱՎԱՆ-ԱՏԵՍՏԱՍԸ՝ ԱՌՑԱՆՑ

Եթե մինչ այս ատեստատը հնարավոր էր ստանալ միայն փաստաթղթի ձևով, ապա հիմա արդեն այն հնարավոր է ունենալ ամենուր՝ թե՛ սմարտֆոններում, թե՛ համակարգիչներում, այսինքն՝ էլեկտրոնային ձևով:

«Ընդհանուր կրթությունը հաստատող պետական փաստաթուղթ տրամադրելու կանոնները հաստատելու մասին» կարգը փոփոխվել է, եւ ավելացել է եւս մեկ կետ: Փոփոխությունը ստորագրել է Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Միխեիլ Չխենկելին:



թյունը հավաստող պետական փաստաթղթի էլեկտրոնային պատճենը: Այն ունի նույն իրավական ուժը, ինչ՝ բնօրինակը: Նյութական փաստաթղթի էլեկտրոնային օրինակը կհաստատվի Գործակալության էլեկտրոնային կնիքով եւ հետաքրքրվող անձանց ներկայացնելու համար կտեղադրվի գործակալության պաշտոնական կայքում»:

Ըստ այդ փոփոխության, գործակալությունը լիազորված է ընդհանուր կրթությունը հավաստող պետական փաստաթղթի հետ միասին հանձնել նաեւ «էլեկտրոնային փաստաթղթի եւ էլեկտրոնային վստահելի ծառայության մասին» Վրաստանի օրենքով նախատեսված ընդհանուր կրթության ոլորտներում իրականացվող միջոցառումներին:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

ԿԻՐԱԿՆՕՐՅԱԿ ԴՊՐՈՑԻ ՍԱՆԵՐԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԵՑԻՆ ԺՈՐԱ ՍՆԽՉՅԱՆԻՆ



Վիրահայոց թեմին կից Սուրբ Եղիա մարգարեի անվան կիրակնօրյա դպրոցի վաստակաշատ ուսուցչուհի Ռոզա Ջոհրաբյանի նախաձեռնությամբ անցկացվեց միջոցառում՝ նվիրված ջախջախյալ բանաստեղծ, լրագրող, հասարակական գործիչ, Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության հիմնադիր եւ նախագահ Ժորա Անիսյանի ծննդյան 70 եւ ստեղծագործական գործունեության 50-ամյա հոբելյաններին:

Հանդիսության սկզբում կիրակնօրյա դպրոցի սաները կենսագրական տեղեկություններ հաղորդեցին Ժորա Անիսյանի մասին: Բանաստեղծն արժեւորվեց որպես եւ՛ մարդ,

եւ՛ բանաստեղծ, եւ՛ մշակույթի ու հասարակական գործիչ, կարեւորվեց հայ-վրացական գրական հարաբերություններում նրա դերը:

Ընթերցվեցին վերնականներ Ալբերտ Իսոյանի, Ստանիսլավ Մելքոնյանի պոե-

տին նվիրված բանաստեղծությունները: Այնուհետեւ հնչեցին պատանիներ ժորա Անիսյանի ազգին ու մայրենի լեզվին, ծննդավայր Ջավախքին ու հայրենի՝ Վրաց հողին նվիրվածության ու հավատարմության բանաստեղծություններ:

Առջանց անցկացված միջոցառմանը, հրեյարի կատարմամբ հնչեց «Մանի՛ր, մանի՛ր, իմ ճախարակ» երգը: Ի դեպ, Անիսյանը ուսանողական տարիներին երգել է Հովհաննես Չեքիջյանի ղեկավարած Հայաստանի պետական ազգային ակադեմիական երգչախմբում:

Տեսագրության վերջում Ժ.Անիսյանն

իր երախտագիտությունը հայտնեց Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանին, կիրակնօրյա դպրոցի ուսուցչուհի Ռ.Ջոհրաբյանին ու սաներին:

Իր բեղմնավոր գործունեության համար Ժ.Անիսյանն արժանացել է պետական բարձր պարգևների՝ Վրաստանի Պատվո շքանշանի, Հայաստանի «Մովսես Խորենացու» մեդալի: Բանաստեղծը միաժամանակ Վրաստանի եւ Հայաստանի գրողների միությունների անդամ է:

ԿՐԻՆԵ ՍԱՆՈՒԿՅԱՆ

ՍԱՄՅԻՆԵ - ԶԱՎԱՍԵԹԻ

«ՆՈՐԱՑՎԱԾ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐ» ԾՐԱԳԻՐԸ՝ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու նախաձեռնած «Նորացված տարածաշրջաններ» պետական ծրագրի շրջանակներում, երկրի մունիցիպալիտետներում սկսվել է ծրագրով նախատեսված նախագծերի հատուկ հանձնաժողովների նախնական միտերի անցկացումը: Նիստերում հստակեցվեցին վերոնշյալ ծրագրի շրջանակներում իրականացվելիք նախագծերն ու դրանց իրականացման վարքերը:

Հիշեցնենք, որ Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին հանդես եկավ «Նորացված տարածաշրջաններ» ծրագրի իրականացման նախաձեռնությամբ, որը, Թբիլիսիից բացի, ներառում է երկրի բոլոր մունիցիպալիտետները: Ծրագրի առաջին փուլի իրականացման համար նախատեսված է քաղաքաշինական ու այլ նշանակության օբյեկտների շինարարության-վերանորոգման համար ծախսել 500 միլիոն լարի:

ՆԻՆՈՇՄԻՆՂԱ

Մայիսի 18-ին, Սամցխե-Ջավախքի պետական լիազոր Բեսիկ Ամիրանաշվիլին, Նինոծմինդայում ծանոթացավ «Նորացված տարածաշրջաններ» պետական ծրագրի շրջանակներում այդ մունիցիպալիտետում իրականացվելիք նախագծերին:

Տարածաշրջանի նահանգապետը, մունիցիպա-



լիտետի ղեկավարների հետ միասին, տեղում ուսումնասիրեց առաջնահերթ նախագծերի իրականացման անհրաժեշտությունը:

Ինչպես նշեց Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետ Անի Մոսոյանը, Նինոծմինդա քաղաքում կա շատ հետաքրքիր ծրագիր, նախատեսվում է կառուցել եւ վերականգնել քաղաքում գտնվող երկու զբոսայգիները՝ Հայոս-Քարթլոսի եւ Ազատության փողոցի կենտրոնական այգին, ինչը շատ կարեւոր է, որպեսզի քաղաքի այցելուները, փոքրերը, երիտասարդներն ու տարեցներն ուղղակիորեն օգտվեն այս բոլոր բարեմասնություններից:

Քաղաքապետի պարզաբանմամբ, վարչապետի նախաձեռնած «Նորացված տարածաշրջաններ» ծրագիրը իրականացվում է ինչպես պետական բյու-

ջեի ֆինանսավորմամբ, այնպես էլ՝ միջազգային ֆինանսական ինստիտուտների աջակցությամբ:

Քաղաքապետի խոսքով, միաժամանակ մունիցիպալային զարգացման հիմնադրամի ֆինանսավորմամբ ընթացքի մեջ են Նինոծմինդայի մունիցիպալիտետի Մեծ Արագյալ գյուղի հանրային դպրոցի շինարարական ու վերականգնողական աշխատանքները: Նախագիծը նախատեսում է հանրային դպրոցի կապիտալ վերանորոգման-վերակառուցման եւ շենքի ամրացման աշխատանքներ իրականացում:

ԱՆԱԼՑԻՆԵ

Ախալցխեում եւս ավարտվեց «Նորացված տարածաշրջաններ» ծրագրի շրջանակներում անցկացվող հանձնաժողովի նախնական միտեր: Նիստի աշխատանքին մասնակցեցին Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցների նախարար Իրակլի Քարսելաձեն, Սամցխե-Ջավախքի տարածաշրջանի պետական լիազոր Բեսիկ Ամիրանաշվիլին, տարածաշրջանի վեց մունիցիպալիտետների քաղաքապետները:

Ինչպես նշվեց միտում, կոնկրետ, Ախալցխեի մունիցիպալիտետի համար վերոնշյալ ծրագիրը բավական հագեցված է: Մասնավորապես, ծրագրված է կանգնեցնել Գիորգի Պայծառ թագավորի հուշարձանը, կիրականացվի կամուրջների վերանորոգումը, ինչպես նաեւ մի շարք փողոցների կարգավորումը: Վերանորոգման աշխատանքներ կիրականացվեն նաեւ Ռաբաթի ամրոցում:

Սամցխե-Ջավախքի երկրամասային վարչության մամլո ծառայությունը հաստուկ «Վրաստանի» համար

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆԻ ՆԵՐՎԱՅԱՅՈՒՅԻՉՆԵՐԸ ՍԱՄՅԻՆԵ-ԶԱՎԱՍԵԹՈՒՄ

Վրաստանի ժողովրդական պաշտպանի առընթեր ազգային փոքրամասնությունների խորհրդի համակարգողը եւ քարտուղարը գտնվում էին Սամցխե-Ջավախքի տարածաշրջանում:



Կոբա Չոպլիանին եւ Բելլա Օսիպովան եղան Ախալքալաքիում, Նինոծմինդայում, Ախալցխեում, որտեղ քաղաքապետարանների մշակույթի, սպորտի, սոցիալական եւ երիտասարդական հարցերի ծառայությունների ղեկավարներ Վալերի Ստեյնաշուրը, Լեւոն Վարդանյանը եւ Ջազա Թամարաշվիլին հյուրերին ծանոթացրին ազգային փոքրամասնություններով հոծաբնակ բնակավայրերի վարչական միավորներում առկա հիմնախնդիրներին, դրանց կարգավորմանն ուղղված միջոցառումներին:

Խոսեցին ազգային փոքրամասնությունների ինտեգրման պե-

թյան ոլորտներում իրականացվելիք ծրագրերի վրա:

Ազգային փոքրամասնությունների խորհրդի ղեկավարները եղան Նինոծմինդայի մունիցիպալիտետի Հեշտիա գյուղում, հանդիպում ունեցան տեղի համայնքի հոգեւոր հովիվ Տեր Անտոն քահանա Անտոնյանի հետ:

ԱՐԵՎԻԿԱ ՍԱՆՈՒԿՅԱՆ